Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Կոթիի Շահնազար Շահնազարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի /15 դասաժամ/, դասվարի /17 դասաժամ/, մաթեմատիկայի /24 դասաժամ/, շախմատ /3 դասաժամ/, աշխարհագրություն /8 դասաժամ/, հայոց լեզու /6 դասաժամ/, երաժշտություն /7 դասաժամ/ տեխնոլոգիա (աղջիկներ) /4 դասաժամ/ առարկայի ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթի անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարի : Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1):
2. Փաստաթուղթ /դիպլոմ/՝ << Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող, հավաստագրերի պատճենները/ դրանց առկայության դեպքում/:
6. Մեկ լուսանկար ՝ 3*4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ս/թ հունվարի 8-ից մինչև հունվարի 19-ը ներառյալ, ամեն օր՝ 9^{00}-ից 15^{00}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2024 թվականի հունվարի 24-ին՝ ժամը 15^{00}-ին,** ՀՀ Տավուշի մարզի Շահնազար Շահնազարյանի անվան Կոթիի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել /093775080/ հեռախոսահամարով: